Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի ____ -ի №__Ա որոշման

«Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2012 թվականի հունիսի 6-ի №199Ա որոշման

# ԿԱՐԳ
# ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՄ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ընթացակարգը: Տեղեկատվությունը ներկայացվում է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների և միացման ժամկետների վերաբերյալ:
2. Տեղեկատվությունը ներկայացվում է եռամսյակային և տարեկան կարգով: 1- 3-րդ եռամսյակների տեղեկատվությունը ներկայացվում է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, իսկ 4-րդ եռամսյակի և տարեկան տեղեկատվությունը՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը:
3. Տեղեկատվությունը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ կարգավորվող անձի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ՝ հանձնաժողովի invest.report@psrc.am էլեկտրոնային հասցեին:

4. Տեղեկատվությունը ներկայացվում է սույն կարգի №1 և №2 հավելվածներով նախատեսված համապատասխանաբար №1 և №2 ձևերով՝ էքսէլէս (XLS), էքսէլէսէքս (XLSX) կամ օդիէս (ODS) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայերեն յունիկոդ (unicode) տառատեսակով:
5. Տեղեկատվության ներկայացման վերաբերյալ սույն կարգի 2-րդ կետով սահմանված ժամկետում կարգավորվող անձը գրավոր ծանուցում է հանձնաժողովին:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի հուլիսի -ի №…Ա որոշմամբ հաստատված կարգի
ՁԱ-1

## Տեղեկատվություն նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ

առ _________________ 201…. թվական

| № | Դիմողի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն ազգանունը) | Դիմելու ամսաթիվը | Դիմողի հեռախոսահամարը | Մարզը, համայնքը, բնակավայրը, հասցեն | Պահանջվող հզորությունը (կՎԱ) | Կառուցվող տեղակայանքների առավելագույն լարման մակարդակ (կՎ) | էլեկտրական ցանցին միացման տեսակը (պարզեցված կամ այլ) | Միացման պայմանագիրը դիմող անձին ներկայացնելու ամսաթիվը | Միացման պայմանագիրը դիմողից ստանալու ամսաթիվը | Միացման պայմանագրի համարը | Մրցույթի արդյունքում ձևավորված նախագծման ժամկետը (օր) | Փաստացի նախագծման ժամկետը (օր) | Շինհավաքակցման աշխատանքների իրականացման ժամկետը (օր) | Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ամսաթիվը | Միացման վճար (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Փաստացի վճարում (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Փաստացի վճարման ամսաթիվը | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 1 | **0.22 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | **0.4 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | **6(10) կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | **35 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | **110 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | **220 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | **Բազմաբնակարան շենքեր կամ թաղամասեր** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | **Պահուստային սնուցում** | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | |

1. Տեղեկատվությունը ներկայացվում է 2008 թվականի փետրվարի 1-ից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրը էլեկտրական ցանցին միանալու դիմում ներկայացրած և հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ մատակարարման պայմանագիր չկնքած դիմողների մասով:
2. Տեղեկատվության 9-րդ, 10-րդ և 11-րդ սյունակներում 01.07.2017 թվականից հետո ստացված դիմումների համար լրացվում է էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի մասով, իսկ բազմաբնակարան շենքերի և թաղամասերի դեպքում՝ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի մասով:
3. Տեղեկատվության 12-րդ և 13-րդ սյունակները լրացվում են, եթե միացման աշխատանքների համար անհրաժեշտ է մշակել նախագիծ:
4. Տեղեկատվության 15-րդ սյունակում լրացվում է էլեկտական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու ամսաթիվը, իսկ  էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման դեպքում՝ փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու ամսաթիվը:
5. Ամսաթվեր պարունակող սյունակները լրացվում են "DATE" 31/12/17 ձևաչափով:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի հուլիսի -ի №…Ա որոշմամբ հաստատված կարգի
Ձև-2

## Տեղեկատվություն նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների վերաբերյալ

առ ________________ 201…. թվական

| № | Դիմողի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն ազգանունը) | Մարզը, համայնքը, բնակավայրը, հասցեն | Պահանջվող հզորությունը (կՎԱ) | Կառուցվող գծի երկարությունը (կմ) և մակնիշը | Կառուցվող տրանսֆորմատորային ենթակայանի հզորությունը (կՎԱ) | Միացման պայմանագրի համարը | Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ամսաթիվը | Ստանդարտ վճար (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) a | Լրացուցիչ/Պահուստային վճար (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) b | Միացման վճար (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) c=a+b | Միացման նախահաշվային արժեքը (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Միացման նպատակով իրականացված փաստացի ծախսումներ (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Փաստացի վճարում (հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ) | Փաստացի վճարման ամսաթիվը | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 1 | **0.22 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 2 | **0.4 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 3 | **6(10) կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 4 | **35 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 5 | **110 կՎ լարման ցանցին միացվող սպառողներ** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 6 | **220 կՎ լարման ցանցին միացող սպառողներ** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 7 | **Բազմաբնակարան շենքեր կամ թաղամասեր** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |
| 8 | **Պահուստային սնուցում** | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | |

1. Տեղեկատվությունը ներկայացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքած կամ փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովված դիմողների մասով:
2. Տեղեկատվության 7-րդ սյունակում 01.07.2017 թվականից հետո ստացված դիմումների համար լրացվում է էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի համարը, իսկ բազմաբնակարան շենքերի և թաղամասերի դեպքում՝ կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի համարը:
3. Տեղեկատվության 8-րդ սյունակում լրացվում է էլեկտական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու ամսաթիվը, իսկ էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման դեպքում՝ փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու ամսաթիվը: